ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

27.11.2015թ. N 01/13.1/6926-15

ՀՀ ֆինանսների նախարար
պարոն Գագիկ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և
արտակարգ իրավիճակների նախարար
պարոն Արմեն ԵՐԻՑՅԱՆԻՆ

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման
վարչության պետ
պարոն Արման ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Ֆելիքս ՑՈԼԱԿՅԱՆԻՆ

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Արթուր ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեր քննարկմանն է ներկայացվում «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստացած անձանց հետ նվիրատվության պայմանագրերի կնքման վերջնաժամկետ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Խնդրում եմ հնարավոր սեղմ ժամկետում ներկայացնել Ձեր կարծիքը՝ վերը նշված որոշման նախագծի վերաբերյալ:

Առդիր՝ 6 էջ:

Հարգանքով

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Բնակարանային քաղաքականության
և կոմունալ ենթակառուցվածքների վարչություն
Եվգենյա Աթայան
(011) 621-719

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_____» _____ 2015 թվականի N_____- Ն

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից (բնակելի տներից) բնակարան (բնակելի տուն) ստացած անձանց հետ հատկացված բնակարանների (բնակելի տների) նվիրատվության պայմանագրերի կնքման վերջնաժամկետ՝

1) 2010 թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Վարպետաց թաղամասում կառուցված բնակելի տներից տուն ստացած անձանց համար 2016 թվականի հունիսի 1-ը.

2) 2012 թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 և Անի թաղամասերում կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած անձանց համար՝ 2016 թվականի դեկտեմբերի 1-ը:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի շրջանակներում հատկացված բնակարանների (բնակելի տների) նվիրատվության պայմանագրերը սույն որոշման 1-ին կետում նշված վերջնաժամկետներում չկնքվելու դեպքում, այդ՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բնակարանները (բնակելի տները), նվիրվում են համապատասխանաբար Գյումրու և Սպիտակի քաղաքային համայնքներին.

2) Ծրագրի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստացած, սակայն սույն որոշման 1-ին կետում նշված վերջնաժամկետներում հատկացված բնակարանի (բնակելի տան) նվիրատվության պայմանագրեր չկնքած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման

նկատմամբ պետական աջակցության ցուցաբերման պարտավորությունները համարվում են կատարմամբ դադարեցված:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված վերջնաժամկետները լրանալուց հետո եռամսյա ժամկետում հստակեցնել Գյումրու և Սպիտակի քաղաքային համայնքներին նվիրվող գույքի ցանկը և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	Անհրաժեշտությունը
	Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից (բնակելի տներից) բնակարան (բնակելի տուն) ստացած անձանց հետ նրանց հատկացված բնակարանների (բնակելի տների) նվիրատվության պայմանագրերի կնքման վերջնաժամկետի սահմանման անհրաժեշտությամբ:
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	Ծրագրի շրջանակներում դեռևս 2010 թվականին Գյումրի քաղաքում կառուցվել է 22 բազմաբնակարան շենք՝ 1056 բնակարանով, Սպիտակ քաղաքում 220 բնակելի տուն, իսկ 2012 թվականին Գյումրի քաղաքում կառուցվել է 38 բազմաբնակարան շենք՝ 1756 բնակարանով: Գյումրի քաղաքում, 2010 թվականին կառուցված 1056 բնակարանից Ծրագրի շահառու ճանաչված ընտանիքներին է հատկացվել 1037 բնակարան, Սպիտակ քաղաքում կառուցված 220 բնակելի տնից՝ 199-ը, իսկ Գյումրի քաղաքում 2012 թվականին կառուցված 1756 բնակարանից՝ 1754–ը: Չնայած այն հանգամանքին, որ Ծրագրի շահառուներին հատկացված բնակարանների նվիրատվության պայմանագրերի նոտարական վավերացման, ինչպես նաև այդ պայմանագրերից ծագող իրավունքների գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են այդ ուղղությամբ ՀՀ պետական տարեկան բյուջեներից հատկացված միջոցների հաշվին, այնուամենայնիվ ՝ • Գյումրի քաղաքում, 2010 թվականին Ծրագրի շահառու ճանաչված ընտանիքներին հատկացված 1037 բնակարանից 26.11.2015թ. դրությամբ (բնակարանների բաշխումից հետո 5 տարվա ընթացքում) կնքվել է 907-ի (87.5%) նվիրատվության պայմանագրերը: Մնացած 130 բնակարանի (12.5%) նվիրատվության պայմանագրերը դեռևս չեն կնքվել: • Սպիտակ քաղաքում 2010 թվականին կառուցված 220 բնակելի տնից Ծրագրի շահառու ճանաչված անձանց հատկացված 199 բնակելի տնից 26.11.2015թ. դրությամբ (բնակելի տների բաշխումից հետո 5 տարվա ընթացքում) կնքվել է 125 բնակելի տան նվիրատվության պայմանագիր (62.8%): Մնացած 74 բնակելի տան (37.2%) նվիրատվության պայմանագրերը դեռևս չեն կնքվել: • Գյումրի քաղաքում 2012 թվականին Ծրագրի շահառու ճանաչված ընտանիքներին հատկացված 1754 բնակարանի նվիրատվության պայմանագրերի կնքման գործընթացը մեկնարկել է 2015 թվականի հունիս ամսից և 26.11.2015թ. դրությամբ կնքվել է մոտ 900 (51.3%) նվիրատվության պայմանագրերը: Մնացած 854 բնակարանի (48.7%) նվիրատվության պայմանագրերը դեռևս չեն կնքվել՝ այդ

	բնակարանները ստացած անձանց կողմից իրենց ժամանակավոր կացարանները դեռևս քանդված չլինելու, կամ բնակարան ստացած ընտանիքի անդամների օրինական ներկայացուցչությունը նոտարական գրասենյակում ապահովող փաստաթղթերը դեռևս ներկայացված չլինելու, կամ ընտանեկան անհամաձայնությունների պատճառով: Հատկացված բնակարանների (բնակելի տների) նվիրատվության պայմանագրերը չեն կնքվել հիմնականում այդ բնակարանները ստացած անձանց կողմից իրենց ժամանակավոր կացարանները չքանդելու, ընտանեկան անհամաձայնությունների, կամ բնակարան ստացած ընտանիքի անդամների օրինական ներկայացուցչությունը նոտարական գրասենյակում ապահովող փաստաթղթերի բացակայության պատճառով: Փաստորեն, Ծրագրի շրջանակներում հատկացված 2990 (1037+199+1754) բնակարանից (բնակելի տնից) 26.11.2015թ. դրությամբ կնքվել է 1932 (907+125+900) բնակարանի (բնակելի տան) նվիրատվության պայմանագիր, կամ հատկացված բնակարանների 64.62 %-ը և դեռևս խնդիր է մնում ապահովել մնացած 35.38 %-ի՝ 1058 (2990-1932) բնակարանի (բնակելի տան) նվիրատվության պայմանագրերի կնքման և արդյունքում այդ բնակարանների (բնակելի տների) նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքի գրանցման գործընթացը:
3.	Կարգավորման նպատակը և բնույթը.
	Որոշման նախագծի նպատակն է Ծրագրի շրջանակներում հատկացված բնակարանների (բնակելի տների) նվիրատվության պայմանագրերի կնքման վերջնաժամկետի սահմանումը, ինչը որոշակի իմաստով ազդեցություն կունենա նվիրատվության պայմանագրերի կնքման գործընթացի տեմպի վրա և կնպաստի այդ բնակարանների (բնակելի տների) նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքի գրանցման գործընթացի արագացմանը: Նշված գործընթացների իրականացումն էլ իր հերթին հնարավորություն կտա ապահովել այդ բնակարանների (բնակելի տների) մասով գույքահարկերի հավաքագրմանը, իսկ բազմաբնակարան շենքերի մասով նաև այդ շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարմանը:
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք
	Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից:
6.	Ակնկալվող արդյունքը
	Որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է ապահովել Ծրագրի շրջանակներում հատկացված և դեռևս քաղաքացիների սեփականությունը չհանդիսացող 1058 բնակարանների (բնակելի տների) նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքի գրանցումը, ինչն էլ կնպաստի այդ բնակարանների (բնակելի տների) մասով գույքահարկերի հավաքագրմանը, իսկ բազմաբնակարան շենքերի մասով նաև այդ շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարմանը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստացած անձանց հետ նվիրատվության պայմանագրերի կնքման վերջնաժամկետ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն ընդունվելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ չեն առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	«Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստացած անձանց հետ նվիրատվության պայմանագրերի կնքման վերջնաժամկետ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտություն չի առաջանում:
2.	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	Որոշման նախագծով կարգավորմանն առաջարկվող հարցերի մասով միջազգային պայմանագրերով պարտավորություններ չեն ստանձնվել:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.	Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը
	«Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստացած անձանց հետ նվիրատվության պայմանագրերի կնքման վերջնաժամկետ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը տեղադրված է ՀՀ քաղաքաշինության նախարարության պաշտոնական կայքի՝ www.minurban.am, «Օրենսդրություն» բաժնի «Իրավական ակտերի նախագծեր» ենթաբաժնում: